ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
«ՈՂՋԻԻ ՂԱՐԻԲ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀՀ Շիրակի մարզպետ
Պարոն Տ. Պետրոսյանին

գ. Ողջի
10.05.2019թ.
№135

Հարգելի պարոն մարզպետ.

Հայտնում եմ Ձեզ, որ հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի համաձայն (ՀՀ ԿԳ նախարարի 15.04.2013 թվականի №396-Ն հրաման, ՀՀ արդարադատության պետական գրանցման №11013214 30.05.2013թ.) 2019 թ.-ի ապրիլի 17-ից մինչև մայիսի 20-ը ներառյալ հայտարարվել է մրցույթ դասվարի, հայոց լեզու և գրականություն, աշխարհագրություն, ռուսաց լեզու, տեխնոլոգիա և ֆիզկուլտուրա առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար, որի տեքստը հրապարակվել է «Կրթություն» շաբաթաթերթի 17.04.2019թ. թիվ 18 (887) համարում: Կից ներկայացվում է հայտարարության տեքստը:

«Ողջիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Գ. Աբրահամյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 07706-19
10 05 19 թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի <<Ողջիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի աշխարհագրություն (11 դասաժամ), դասվար (13 դասաժամ), ռուսաց լեզու(14 դասաժամ), տեխնոլոգիա (3 դասաժամ), ֆիզկուլտուրա(14 դասաժամ), հայոց լեզու և գրականություն(14 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրությունը(Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2019 թվականի ապրիլի 17-ից մինչև մայիսի 20-ը ներառյալ ժամը 9:30-ից մինչև 16:00-ն, աշխատանքային օրերին:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2019 թվականի մայիսի 21 -ին՝ ժամը 13:00-ին, Շիրակի մարզի Ողջիի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 50 82 82 հեռախոսահամարով: